ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Մ. Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), *Երևան, Պատմության ինստիտուտ, 2016, 366 էջ:*

Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումից հետո հայկական պատմագիտության առաջնային խնդիրներից է Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի պատմության «սպիտակ էջերի» ուսումնասիրությունը:



Այս տեսանկյունից ողջունելի է ճանաչված պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Հակոբյանի «Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ)» մենագրությունը: Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը, խմբագիրն է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Հարությունյանը:

Մենագրությունը բաղկացած է՝ ներածությունից, վեց գլխից, վերջաբանից, ռուսերեն և անգլերեն ամփոփումներից, աղբյուրների ու գրականության ցանկից, անվանացանկից: Հեղինակն իր առջև խնդիր է դրել ներկայացնել միակուսակցական վարչակարգի ձևավորման գործընթացը Խորհրդային Հայաստանում՝ քննության նյութ դարձնելով դրա բաղադրատարրերը [մենիշխանության (դիկտատուրայի) առաջացման նախադրյալները, խորհրդային իշխանության բնույթն ու կառուցվածքը, ընտրական համակարգը, իշխանության թևերի սահմանազատման հարցը, կուսակցական անվանակարգության (նոմենկլատուրայի) ձևավորումը, ներկուսակցական բանավեճերը և այլն]:

Ուսումնասիրության առաջին գլխում անդրադարձ է կատարվում Խորհրդային Հայաստանում միակուսակցական վարչակարգի ձևավորման պատմաքաղաքական և գաղափարական նախադրյալներին, պրոլետարիատի մենատիրության էությանն ու բնույթին առնչվող հարցերին: Հեղինակը նախ քննում է ռուսական միապետության և բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի փոխկապակցվածության հանգամանքը՝ եզրակացնելով, որ ռուս

ժողովրդի սոցիալական հոգեկերտվածքը նպաստավոր դեր ունեցավ խորհրդային բռնապետական վարչակարգի ձևավորման համար: Նրա համոզմամբ՝ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում մենիշխանության հաստատման կարևոր նախադրյալներից էր բնակչության կրթական ցածր մակարդակը, քաղաքական ցածր մշակույթը, ցարիզմից ժառանգված ուռճացված բյուրոկրատական ապարատը և այլն: Խորհրդային ժողովուրդները (այդ թվում՝ հայերը) ընդունեցին ու հարմարվեցին բոլշևիկյան վարչակարգին, քանի որ բազմազգ, հզոր պետության մեջ իրենց ավելի ապահով, անվտանգ ու պաշտպանված էին զգում: Ա. Հակոբյանն անառարկելի փաստերի հիման վրա ցույց է տալիս, որ խորհրդային երկրում եղելէ ոչ թե պրոլետարիատի, այլ՝ կոմունիստական կուսակցության մենատիրություն, ուր ամբողջ իշխանությունը փաստացի կենտրոնացված էր կուսակցական վերնախավի ձեռքում: Այս իրողությունն առավել քան վերաբերում էր Խորհրդային Հայաստանին, որտեղ խորհրդայնացման նախօրյակին պրոլետարիատ համարյա չի եղել:

Աշխատության երկրորդ գլուխը վերաբերում է Ռուսաստանի ու Հայաստանի խորհրդայնացման առանձնահատկություններին, հեղկոմների և խորհուրդների՝ որպես իշխանության ձևերի բնույթի ու բովանդակության, կոալիցիոն իշխանության, մամուլի և մշակույթի ազատության հարցերին, միակուսակցական կառավարման համակարգի հաստատման գործընթացում կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների հարաբերություններին: Հեղինակն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացվեց ոչ թե հասարակության բնական զարգացման ու օրինաչափ զարգացումների շնորհիվ, այլ՝ արտաքին ուժերի միջամտությամբ, ՀՀ - կառավարության և իշխող կուսակցության իշխանությունից հրաժարման արդյունքում: Այս իրողությամբ էր պայմանավորված, որ Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող շրջանում իշխանության բարձրագույն մարմնի գործառույթները ստանձնած Հայաստանի հեղկոմը բավարար սոցիալական հենարան չուներ: Բանն այն է, որ, ի տարբերություն Խորհրդային Ռուսաստանի, Խորհրդային Հայաստանում հեղկոմները ոչ թե ընտրված, այլ նշանակովի ժամանակավոր մարմիններ էին: Առկա փաստերի համադրությամբ Ա. Հակոբյանը ցույց է տալիս, որ, կրկին ի տարբերություն Խորհրդային Ռուսաստանի, որտեղ 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. մարտը բոլշևիկները կոալիցիա էին կազմել ձախ էսէռների հետ, Խորհրդային Հայաստանում նման գործընթաց տեղի չունեցավ՝ չնայած Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի 6-րդ կետի համաձայն Հայաստանի հեղկոմի կազմում ընդգրկվելու էին երկու ձախ դաշնակցա-

կաններ: 1920 թ. դեկտեմբերի 4-ին Երևան ժամանած Հայհեղկոմը հրաժարվեց կատարել պայմանագրի դրույթները: Հայկոմկուսն ու Հայհեղկոմն անհանդուրժող վերաբերմունք էին որդեգրել հայկական կուսակցությունների նկատմամբ: Հեղինակի դիպուկ բնութագրմամբ՝ այս հանգամանքը պայմանավորված էր այն իրողությամբ, որ «Իշխանության գլուխ անցած Հայհեղկոմը Հայաստանում որևէ կուսակցության կողմից քաղաքական հենարանի ու աջակցության կարիքը չուներ, որովհետև նա այդ իշխանությունը ստացել էր Խորհրդային Ռուսաստանի ու նրա Կարմիր բանակի օգնությամբ» (էջ 77): Ասվածի դրսևորումներից էր նաև այն, որ եթե Խորհրդային Ռուսաստանում ոչ կոմունիստական մամուլի և տեղեկատվության այլ միջոցների արգելումը տեղի ունեցավ աստիճանաբար, ապա Խորհրդային Հայաստանում ընդդիմադիր մամուլը միանգամից փակվեց: Խորհրդային Հայաստանում միակուսակցական համակարգի հաստատման ճանապարհի հենց սկզբից արգելվեցին ոչ պրոլետարական, բուրժուական, ազգայնական համարվող բոլոր կուսակցությունները: Կոմկուսն ամենատարբեր միջոցների դիմեց այդ կուսակցություններն ասպարեզից վերացնելու համար: Այս տեսակետից ուշադրության է արժանի Ա. Հակոբյանի այն դիտարկումը, որ Սփյուռքում գործող հայ ազգային-քաղաքական կուսակցություններից ՌԱԿ-ը և ՍԴՀԿ-ն խորհրդային վարչակարգի նկատմամբ ունեցել են բարյացակամ, հանդուրժող վերաբերմունք: Ինչ վերաբերում է ՀՅԴ-ին, ապա, ի տարբերություն ռուսական վտարանդիության առանձին խմբավորումների, վերջինիս «ընդդիմությունն ու անհաշտությունը դրսևորվել են ոչ թե զինված պայքարի ծրագրեր մշակելով, այլ գերազանցապես գաղափարական հողի վրա» (էջ 104):

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է խորհրդային ընտրական համակարգի ձևավորմանը և 1920-ական թվականներին Հայաստանում անցկացված ընտրական գործընթացներին: Երիցս ճիշտ է հեղինակը, երբ շեշտում է, որ ներկայումս «մենք աղոտ պատկերացում ունենք ՀՍԽՀ 1920-ական թվականներին ձևավորված ընտրական համակարգի և ընտրությունների գործընթացի վերաբերյալ» (էջ 108): Սա մենագրության առավել ուշագրավ հատվածներից է: Եթե նախորդ երկու գլխում քննարկված հարցերին պատմագիտական գրականության մեջ այս կամ այն չափով անդրադարձ կա, ապա ՀՍԽՀ-ում իրականացված ընտրական գործընթացներն ուսումնասիրված չեն: Մենագրության մեջ ցույց է տրվում, որ ընտրական ողջ գործընթացը հսկվում էր ՀՍԽՀ իշխանությունների և Հայկոմկուսի կողմից: 1920-ական թվականներին Հայաստանում գործող դասակարգային և ընտրական խտրական համակարգի պայմաններում, երբ համապետական ընտ-

րություններն ուղղակի (ՀՍԽՀ-ում ուղղակի էին միայն տեղական՝ քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրությունները), գաղտնի և համընդհանուր (սոցիալական որոշ խավեր զրկված էին ընտրական իրավունքից) չէր, այդ համակարգը տեղեր էր ապահովում միայն իշխող կոմկուսի ու նրա վստահությունը վայելող անձանց համար: Ա. Հակոբյանը մանրամասն անդրադառնում է ժամանակակից բնորոշմամբ ոչ ժողովրդավարական ընտրական գործընթացներին, վերջինի կազմակերպական-տեխնիկական, նախընտրական-հաշվետու նախափուլերին ու բուն ընտրություններին, որը տեղի էր ունենում նախապես կազմված ցուցակներով: Որոշակի անդրադարձ կա նաև ընտրական գործընթացի առօրեականությանը, մարդկանց ձայնազրկելու պախարակելի երևույթին:

Աշխատության չորրորդ գլուխը նվիրված է կուսակցական նոմենկլատուրայի (անվանակարգության) առաջացմանը: Նախ հեղինակն անդրադառնում է նոմենկլատուրայի առաջացման նախադրյալներին ու առաջին քայլերին, ցույց է տալիս, որ նման գործելակերպի արդյունքում «մեծացավ կուսապարատի դերը կադրերի ընտրության և նշանակման գործում՝ միաժամանակ ուռճացնելով ու բյուրոկրատացնելով այն» (էջ 188): Այնուհետև քննության է առնված Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդած շրջանում կուսակցականների և պետական ծառայողների համար հաստատված հատուկ (հարվածային) փայերի ու արտոնությունների հարցը, դասային խտրական մոտեցումները: Այս ամենի արդյունքում կոմկուսը վերածվում էր արտոնյալների խավի, երբ կուսակցական-պետական վերնախավը, ըստ զբաղեցրած պաշտոնի, օգտվում էր հատուկ արտոնություններից ու առանձնաշնորհումներից:

Հաջորդ՝ հինգերորդ գլխում անդրադարձ է կատարվում նոմենկլատուրայի ձևավորման գործընթացին և կառուցվածքին: Հեղինակը գրում է, որ Խորհրդային Միությունում, ըստ պետության կառավարման աստիճանակարգի, գոյություն է ունեցել նոմենկլատուրայի առնվազն 4 մակարդակ՝ յուրաքանչյուրը երեքական կարգի: Նոմենկլատուրային պաշտոնները գտնվում էին կոմկուսի հսկողության ներքո. կուսակցական բարձրագույն մարմնի կողմից նշանակված պաշտոնյաներն առանց թույլտվության իրավունք չունեին ազատվել աշխատանքից կամ այլ աշխատանքի տեղափոխվել, փոխել բնակավայրը: Ա. Հակոբյանի կարծիքով՝ Հայաստանում նոմենկլատուրայի ձևավորման գործընթացը փաստացի սկսվել է 1924 թ., ավարտուն տեսք ստացել՝ 1926 թ.: Բանն այն է, որ խորհրդային պետական-կուսակցական նոմենկլատուրային համակարգը ձևավորվել է աստիճանաբար՝ ժամանակի ընթացքում առավել կատարելագործվելով: Հեղինակը հայ

պատմագիտության մեջ առաջին անգամ ներկայացնում է նոմենկլատուրայի ճյուղային կառուցվածքը, մանրամասն քննության առնում 1927 թ. դրությամբ գոյություն ունեցող 14 ճյուղերը. կուսակցական, պրոպդաստիարակչական, արհեստակցական, առողջապահական և սոցապահովության, խորհրդային-վարչական, դատական-պատժիչ, արդյունաբերական-արտադրական, ֆինանսական, վարկային-բանկային, կոոպերատիվ, առևտրային, պլանային-կարգավորող, հողային, տրանսպորտի և կապի (1929 թ. ավելանում է նաև հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ճյուղը): Այնուհետև անդրադարձ է կատարվում ամենաստորին օղակը հանդիսացող՝ հանրապետության գավառային և քաղաքային նոմենկլատուրաներին: Ա. Հակոբյանի հաշվումների համաձայն՝ 1920-ական թվականների վերջերին ՀՍԽՀ նոմենկլատուրային պաշտոնների ընդհանուր քանակը եղել է 4209:

Աշխատության վեցերորդ գլուխը նվիրված է 1920-ական թվականներին պետական իշխանության թևերի սահմանազատման հարցին և Հայկոմկուսի ներսում գոյություն ունեցած խմբակայնությանը, ընդդիմությանն ու ներկուսակցական բանավեճերին: Ա. Հակոբյանը համոզիչ փաստերի միջոցով ցույց է տալիս, որ կոմկուսը խիստ վերահսկողություն էր հաստատել օրենսդիր, գործադիր ու դատական մարմինների, նաև լրատվության միջոցների նկատմամբ: Խոսք անգամ չէր կարող լինել վերջինների իրական տարանջատվածության ու ինքնուրույնության մասին՝ չնայած անընդհատ խոսվում էր իշխանության թևերի տարանջատման անհրաժեշտության մասին: ՀԿ(բ)Կ գավկոմները տեղի-անտեղի միջամտում էին գավգործկոմների աշխատանքներին, իսկ կուսակցության կենտկոմը փաստացի կառավարության վերադասն էր. նշանակում էր կամ ազատում, համապատասխան հրահանգներ տալիս ժողկոմներին: Ավելին, ինչպես նկատում է հեղինակը, «պետական բարձրագույն իշխանության մարմին հանդիսացող խորհուրդների համագումարը և պարբերաբար գործող ԿԳԿ-ը և նրա նախագահությունը գտնվում էին կուսակցության անմիջական հսկողության և ենթակայության տակ» (էջ 268):

Այնուհետև Ա. Հակոբյանը մանրամասն անդրադառնում է 1921, 1922, 1927, 1930 թվականներին Հայկոմկուսի ներսում առաջ եկած ներկուսակցական խմբակայնության, ընդդիմության ու բանավեճի դրսևորումներին, խնդիրներ, որոնք խորհրդահայ պատմագիտության կողմից շրջանցվել կամ միակողմանի են ներկայացվել: 1920-ականների առաջին կեսին ՀՍԽՀ ղեկավարության կազմում առանցքային դերակատարություն ունեին սպեցիֆիկյան անցյալ ունեցող գործիչները՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս

Լուկաշինը, Աշոտ Հովհաննիսյանը, Արտաշես Կարինյանը, Պողոս Մակինցյանը և ուրիշներ, որոնց «բնորոշ է եղել ազգային դիմագիծը» (էջ 295): Մեծածավալ փաստական նյութի օգտագործմամբ հեղինակը ցույց է տալիս, որ 1920-ականներին ՀՍԽՀ-ում հնարավորություն է տրվել ներկուսակցական բանավեճեր անցկացնել, այլակարծություն դրսևորել և այլն: Ինչպես ողջ Միությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում եղել են Լև Տրոցկու և այլ ընդդիմադիրների հետևորդներ: Պատմաբանն իրավացիորեն եզրակացնում է, որ «Հայաստանում տրոցկիզմի դեմ պայքարը ստացել է «սպեցիֆիզմի», «դաշնակիզմի», «մենշևիզմի» և ազգայնականության դեմ պայքարի երանգավորումներ» (էջ 333):

Գրքի վերջաբանում Ա. Հակոբյանը համոզմունք է հայտնում, որ խորհրդային 70 տարիների ընթացքում Հայաստանի և հայության բնութագրիչները դարձան ոչ թե կուսակցական բյուրոկրատ էլիտան, այլ՝ արդար աշխատավորը, հայրենիքի պաշտպանն ու զինվորը:

Աշխատության վերաբերյալ ունենք մի քանի դիտարկում: Կարծում ենք, առավել նպատակահարմար կլիներ միավորել աշխատության չորրորդ և հինգերորդ գլուխները, քանի որ երկուսում էլ քննարկվում են նոմենկլատուրային վերաբերող հարցեր: Աշխատանքում տեղ են գտել մի շարք անճշտություններ: Այսպես՝ ՀՍԽՀ կառավարության կազմավորման օր է նշված 1920 թ. դեկտեմբերի 7-ը (էջ 65), պետք է լինի՝ դեկտեմբերի 12-ը, ՀՍԽՀ առաջին ֆինժողկոմ է նշվում Արամայիս Երզնկյանը (էջ 65), պետք է լինի՝ Եզեկել Երզնկյան, ՀՍԽՀ Գլավլիտի հիմնադրման ժամանակ է նշված 1922 թ. հունիսը (էջ 87), պետք է լինի՝ 1923 թ. հունիս, 1922 թ. համար նշված է ՀՍԽՀ պետական-քաղաքական վարչություն (էջ 195), պետք է լինի՝ ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողով (Չեկա), գրված է՝ Հայկոմկուսի «Երևանի քաղաքային կոմիտե» (էջ 241), պետք է լինի՝ «Երևանի գավառային կոմիտե» և այլն:

Ամփոփելով՝ փաստենք, որ նորահայտ և հրատարակված արխիվային փաստաթղթերի, մամուլի և ուսումնասիրությունների համալիր քննության արդյունքում Ա. Հակոբյանը ստեղծել է Խորհրդային Հայաստանի պատմության առանցքային խնդիրներից մեկին՝ միակուսակցական վարչակարգի հաստատմանը նվիրված հիմնարար հետազոտություն: Քննարկված հարցերի լայն շրջանակով, հետազոտական խորությամբ այն նոր խոսք, նոր շունչ է մերօրյա պատմագիտության համար: Նման աշխատանքի լույս ընծայումը պատիվ է բերում ոչ միայն հեղինակին, այլև՝ հայ պատմագիտությանը, որի անխոնջ մշակներից է Ա. Հակոբյանը:

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ